

## Վերջույթների ախտահարումներ

Վերջույթների ախտահարումները հանդիպում են ինչպես արոտային, այնպես էլ մսուրային շրջանում: Ախտահարումները հիմնականում առաջանում են անասնապահների ոչ ճիշտ վերաբերմունքի (հարված, աղալների և անասնագոմերի կեղտոտ պահելը և այլն), ինֆեկցիոն, մակաբուծային և այլ հիվանդությունների հետևանքով: Վերջույթների ախտահարումների պատճառով կենդանիների մոտ նվազում է մթերատվությունը, դժվարանում է խնամքը, առաջանում են բորբոքումներ, դարպաս է բացվում ինֆեկցիոն և մակաբուծային հիվանդությունների համար: Ժամանակին բուժում չցուցաբերելու դեպքում վերջույթների ախտահարումը կարող է դառնալ կենդանու անկման պատճառ: Վերջույթների ախտահարումները կարող են արտահայտվել՝

- կոտրվածքների, հոդախախտերի, ջլաբորբերի և ներվաբորբերի տեսքով,
- սալջարդերի, կտրող, ծակող գործիքներից առաջացած վերքերի տեսքով,
- որոշ ինֆեկցիոն, պարազիտային հիվանդություններից առաջացած վերքերի տեսքով,
- ծննդյան և հետծննդյան պարեզների (գինեկոլոգիական հիվանդություն) հետևանքով առաջացած վերքերի տեսքով:

Արոտային շրջանում վերջույթների ախտահարումներին նպաստում են նաև կլիմայական պայմանները: Երաշտ և չափից շատ խոնավ տարիներին հաճախ են հանդիպում վերջույթների ստորին հատվածների ախտահարումներ:

Դրանք են՝

- կճղակի, միջկճղակային ճեղքի, փափկանի բորբոքումներ,
- կճղակի եղջերային մաշիկի գերաճ կամ գերմաշվածություն:

### Կանխարգելումը.

- Որքան հնարավոր է կենդանիներին գերծ պահեք վնասվածքներ առաջացնող գործիքներից և իրավիճակներից:
- Չորային ամիսներին կենդանիներին հաճախակի պահեք խոնավ մարգագետիններում:
- Խոնավ եղանակներին արոտային շրջանում հաճախակի փոխեք աղալները, կենդանիների գիշերային հանգստի տեղերը:
- Մի աղտոտեք արոտները ջարդված շշերով, սպակիներով, մետաղալարերով, մեխերով և այլն:
- Արոտավայրերում անվաղողեր մի վառեք. ամենից հաճախ կենդանիների կճղակները կամ սմբակները վնասվում են մետաղալարերով, երբ արոտավայրերում վառում են անվաղողեր:

**Բուժումը.** Կենդանիների ցանկացած տիպի վնասվածքները, վերջույթների կոտրվածքները, վերքերը, ֆլեգմոնաները և այլն պահանջում են խիստ մասնագիտական և լիարժեք բուժում: Այդ իսկ պատճառով, պետք է ժամանակին այդ մասին տեղյակ պահեք անասնաբույժին, իսկ մինչ անասնաբույժի ժամանումը Դուք կարող եք ցույց տալ առաջին բուժօգնություն.

- **Խնամեք վնասված հատվածը.** մաքրեք վնասված մասերը մեխանիկական աղտոտվածությունից՝ կեղտից, կղանքից և այլն:
- **Լվացրեք վնասված հատվածը** ջրով և օճառով, իսկ եթե ունեք մարգանցովկա, ցանկալի է լվանալ մարգանցովկայի 0.5-1%-անոց լուծույթով (1գրամ մարգանցովկայի փոշին լուծել 999լ ջրում):
- **Վնասված հատվածը կապել բինտով կամ կտորով:**